ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«05» 08 2024թ. Հր. 2149-Ա
ք. Երևան

ԱՋԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 746-Լ որոշմամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 28-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել Արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Սաթենիկ Հարությունյանին:

2. Նախարարության քարտուղարությանը՝ եռօրյա ժամկետում Արտաքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներին, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին շրջաբերականով տեղեկացնել ազդարարման պատասխանատու անձի մասին:

3. Ուժը կորցրած ճանաչել Արտաքին գործերի նախարարի 2018 թվականի հուլիսի 3-ի «Ազդարարման համար պատասխանատու անձ նշանակելու մասին» թիվ 1272-Ա հրամանը:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ա.ՄԻՐԶՈՅԱՆ

Համապատասխանում է բնօրինակին՝
Անձնակազմի կառավարման վարչության
խորհրդական, վարչության պետի
պարտականությունները կատարող՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ